



Research Center

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն


«ԱՃ-ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ՊԱՐԱԴՈՔՍ

Երևան, հուլիս 2008

Հայաստանի տնտեսության զարգացումը վերջին շրջանում բնութագրելի է “աճ-մրցունակություն” պարադոքսով

- Վերջին 4 տարիների ընթացքում Հայաստանում էական տնտեսական աճի պայմաններում տեղի է ունեցել մրցունակության անկում՝ չափված ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող Մրցունակության համաշխարհային զեկույցի:
- Ազգային մրցունակության զեկույցի համաձայն՝ 2008 թվականին ևս առկա էր՝ աճ-մրցունակություն պարադոքսը՝ ՀՆԱ մակարդակի ազդեցիկ աճի զուգակցումը միջազգային մրցունակության նվազող դիրքերի հետ (համաձայն ՄՀԶ չափանիշների):


ՀՆԱ դինամիկան և Համաշխարհային մրցունակության Հայաստանի վարկանիշը




Տնտեսության երկնիշ աճի հիմքում մրցունակության բացակայությունը տնտեսական ավելի խոր անկման հիմնարար պատճառներից է:

- 1990 թվականից ի վեր Հայաստանի բնակչության բարեկեցության մակարդակն ունեցել է զարգացման երեք հստակ փուլ: 2008 թվականը ենթադրվում է իբրև չորրորդ փուլի սկիզբ՝ դեռևս անորոշ դինամիկայով:
- Տնտեսական ճգնաժամի հետևանքով ի հայտ եկան Հայաստանի տնտեսությունում առկա հիմնական “մակրոտնտեսական հիվանդությունները”:
- Ներկայիս տնտեսական ճգնաժամը տեսանելի դարձրեց Հայաստանի տնտեսության խոցելիությունը, որն արտահայտվում է տնտեսության հետևյալ բնորոշիչ գծերով.
 - Ա. Աճի ոչ կայուն շարժիչ ուժեր
 - Բ. Արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածք
 - Գ. Չափից շատ կախում մասնավոր տրանսֆերտներից

Գնողունակության պարիտետով արտահայտված ՀՆԱ (մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով, ԱՄՆ դոլ.)



ՀՆԱ-ի միջին աճը 1991-2009, %



Շարունակաբար նվազող մրցունակությունը գլոբալ ճգնաժամերի նկատմամբ առավել խոցելիության լավ կանխորոշիչ է:

“Ծաղկող” տնտեսության և նվազող մրցունակության պարադոքսը դրսևորվում է փոքրաթիվ երկրներում:


Տնտեսության հետագա զարգացման հեռանկարները բավականին վատատեսական են այն երկրներում, որտեղ ՀՆԱ-ի աճը զուգակցվել է մրցունակության անկմամբ, բացառությամբ ռեսուրսափնտեսիվ տնտեսությունների, ինչպիսիք են Ադրբեյջանը և Եգիպտոսը:

		2005	2006	2007	2008	2009Կ	2010Կ	2014Կ
Սլովենիա	ՀՆԱ իրական աճ, %	4.30	5.90	6.80	3.50	-2.7	1.4	3.5
	ՄՀՀ	30	33	39	42			
Սլովակիա	ՀՆԱ իրական աճ, %	6.50	8.50	10.40	6.40	-2.1	1.9	4.2
	ՄՀՀ	36	37	41	46			
Լեհաստան	ՀՆԱ իրական աճ, %	3.60	6.20	6.70	4.80	-0.7	1.3	4.3
	ՄՀՀ	43	48	51	53			
Հունգարիա	ՀՆԱ իրական աճ, %	4.00	4.00	1.10	0.60	-3.3	-0.4	4.5
	ՄՀՀ	35	41	47	62			
Ղազախստան	ՀՆԱ իրական աճ, %	9.70	10.70	8.90	3.20	-2.0	1.5	8
	ՄՀՀ	51	56	61	66			
Ադրբեյջան	ՀՆԱ իրական աճ, %	24.30	30.50	23.40	11.60	2.5	12.3	-0.8
	ՄՀՀ	62	64	66	69			
Եգիպտոս	ՀՆԱ իրական աճ, %	4.50	6.80	7.10	7.20	3.6	3	6
	ՄՀՀ	52	63	77	81			
Հայաստան	ՀՆԱ իրական աճ, %	14.00	13.20	13.80	6.80	-5.0	0	5
	ՄՀՀ	81	82	93	97			
Բոսնիա Հերցեգովինա	ՀՆԱ իրական աճ, %	3.90	6.90	6.80	5.50	-3.0	0.5	4.5
	ՄՀՀ	88	89	106	107			

Ճգնաժամի անսպասելիորեն արագ “ժամանումը” Հայաստան ժխտում է տնտեսության գլոբալ ցածր ինտեգրացվածության վարկածը:

- Ճգնաժամի ազդեցության արագ տեղափոխումը Հայաստան ցույց տվեց վերջինիս բավական զգայունությունն արտաքին շոկերի նկատմամբ:
- ՀՆԱ անկումը Հայաստանում սկսել է ԱՄՆ եւ Եվրոպայի ՀՆԱ-ների անկման հետ միաժամանակ:
- Նույնիսկ Ռուսաստանի տնտեսությունն այդքան արագ անկում չարձանագրեց:
- Տարածման արագությանը նպաստեց նաեւ տնտեսության ցածր դիվերսիֆիկացման աստիճանը:
- Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճգնաժամը սկիզբ առավ ֆինանսական շուկայում ցնցումներից, Հայաստանում այն սկսվեց իրական հատվածում, որը պայմանավորված էր պղնձի եւ մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ:
- Տնտեսական անկման հետագա խորացումը խթանեց մասնավոր տրանսֆերտների նվազումը և շինարարության ոլորտում կտրուկ անկումը:


ՀՆԱ-ի դինամիկան, %, փոփոխությունը նախորդ համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ




Ճգնաժամն արագորեն անդրադարձավ տնային տնտեսությունների վրա

- “Տնտեսություն եւ արժեքներ” հետազոտական կենտրոնը մարտին իրականացրեց տնային տնտեսությունների եւ ձեռնարկությունների հարցում՝ գնահատելու ճգնաժամի ազդեցությունը: Համաձայն այդ հետազոտության.
 - Հայաստանի բնակչության մոտ 70%-ն արդեն իսկ զգացել է ճգնաժամի բացասական ազդեցությունը սեփական եկամուտների վրա:
 - Տնային տնտեսությունների 44%-ի մոտ նկատվել է եկամուտի նվազում, 15%-ի մոտ՝ աշխատավարձի ուշացումներ:
 - Եկամուտների կրճատումը գրանցվել է հիմնականում 11-25%-ի շրջակայքում, ընդ որում կրճատման մակարդակն առավել մեծ է եղել Երևանում, որտեղ հարցվողների մոտ 40% նշել են, որ իրենց ընտանիքի եկամուտները կրճատվել են 26-ից մինչև 50%-ով:

Ինչպիսին է եղել ազդեցությունը Ձեր ընտանիքի վրա




Ընդհանրի ընդհանուր եկամուտների կրճատումը



Ճգնաժամը հանգեցրեց նաև տնային տնտեսությունների վարքագծի արագ փոփոխության

- Տնային տնտեսությունների մոտ 30%-ը պլանավորում են կրճատել կամ հետաձգել կապի, երկարաժամկետ օգտագործման ապրանքների և հանգստի վրա կատարվող ծախսերը:
- Տնային տնտեսությունների 80%-ից ավելին մեծ հավանականությամբ կսկսեն նախապատվություն տալ ավելի էժան ապրանքներին:
- Տնային տնտեսությունների միայն 20%-ն է վստահ, որ ճգնաժամը կհաղթահարվի կարճ ժամանակահատվածում, իսկ մոտ կեսը՝ կանխատեսում է տնտեսության վիճակի առավել վատթարացում:

Սպասումները ճգնաժամի հետագա զարգացումների վերաբերյալ 2009թ. ընթացքում




- Ճգնաժամը կխորանա, և դրա բացասական ազդեցությունը կլինի էական Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի վրա
- Ճգնաժամի ազդեցությունն էական չի լինի, քանի որ կառավարությունը կարող է մեղմել դրա ազդեցությունը
- Ճգնաժամը կհաղթահարվի մոտակա մի քանի ամիսների ընթացքում, որի համար կան անհրաժեշտ ռեսուրսներ


Ճգնաժամը ունեցել է համատարած ազդեցություն մասնավոր հատվածի վրա:

- Հարցման ենթարկված գործարարների 90%-ը նշել է, որ ճգնաժամն արդեն իսկ ազդել է իրենց ընկերության գործունեության վրա, իսկ միայն 5% է կարծում, որ այն ընդհանապես ազդեցություն չի ունենա:
- Ճգնաժամի բացասական հետևանքներն ավելի բազմատեսակ են խոշոր և արդյունաբերական ձեռնարկությունների պարագայում:
- Հարցված ձեռնարկությունների շուրջ 70%-ի մոտ հիմնական խնդիրները կապված են եղել վաճառքի ծավալի կրճատման, վճարումների ուշացման կամ չկատարման հետ, իսկ 30-45%-ի մոտ դժվարացել է ֆինանսների ներգրավումը:
- Ճգնաժամը նաև ունեցել է դրական հետևանքներ որոշ ընկերությունների համար, հատկապես, մրցակիցների դիրքերի թուլացման, հումքի և սարքավորումների գների անկման տեսակետից:

Ճգնաժամի դրական ազդեցություն



Ճգնաժամի բացասական ազդեցություն



Մասնավոր ոլորտի մեծամասնությունը զինված է վատատեսական տրամադրությամբ

- Որպես ճգնաժամին դիմակայման միջոց ձեռնարկությունների գերակշիռ մասը պատրաստվում է կրճատել վարչական ծախսերը և հետաձգել ներդրումների իրականացումը:
- Աշխատակիցների թվի կրճատում են նախատեսում հարցված ընկերությունների 40%-ը, ընդ որում այն ավելի ծավալուն կլինի փոքր և միջին ձեռնարկություններում: Աշխատավարձի կրճատում է սպասվում ընկերությունների միայն 20%-ում, հատկապես արդյունաբերական ընկերություններում:
- Ձեռնարկատերերն առավել վատատես են իրենց կախատեսումներում, և նրանց մոտ 80%-ը սպասում է ճգնաժամի խորացում 2009թ.-ի ընթացքում:

Ինչ քայլեր եք նախատեսում իրականացնել ճգնաժամի բացասական հետևանքները նվազեցնելու կամ կանխելու համար



Ինչպիսին են Ձեր սպասումները ճգնաժամի հետագա զարգացումների վերաբերյալ 2009թ. ընթացքում



- Ճգնաժամը կխորանա, և դրա բացասական ազդեցությունը կլինի էական Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի վրա
- Ճգնաժամի ազդեցությունն էական չի լինի, քանի որ կառավարությունը կարող է մեղմել դրա ազդեցությունը
- Ճգնաժամը կհաղթահարվի մոտակա մի քանի ամիսների ընթացքում, որի համար, վստահ են, կան անհրաժեշտ ռեսուրսներ

Տնտեսական գործակալների արձագանքը ճգնաժամին ադեկվատ է, սակայն իրենց բնույթով կարճաժամկետ ազդեցության, եւ չի վերացնում Հայաստանում դրա ավելի խորը ազդեցության պատճառները:

Հիմնական նախաձեռնությունները

- Վարկեր / վարկային երաշխիքներ
- Փայտփրական ներդրումներ
- Հիպոթեքային վարկեր

Հասցեագրվող հիմնախնդիրներ

- Կարճաժամկետ ֆինանսավորում
- Արտադրության օժանդակում
- Ներմուծման փոխարինում որոշ ճյուղերում
- Աշխատատեղերի ստեղծում
- Սոցիալական լարվածության թուլացում

Անտեսվող հիմնախնդիրներ

- Ընկերությունների արտադրողականության բարձրացում եւ միջազգային մրցունակության ապահովում
- Ընկերությունների կառավարման որակի բարձրացում (կորպորատիվ կառ-մ, միջազգային բաշխման ցանցերի կառուցում, նոր տեխնոլոգիաների ներգրավում, եւն)
- Սպառման սահմանափակ շուկա եւ պահանջարկի ցածր կատարելագործվածություն
- Արտահանման բազայի դիվերսիֆիկացում եւ խթանում
- Մրցակցային միջավայրի ստեղծում
- Օտարերկրյա ներդրումների թիրախավորված ներգրավում

Իրականացվող որոշ նախաձեռնություններ հավակնում են դառնալ ռազմավարական հիմնաքարեր տնտեսության գերակա ոլորտներում

- **Համաշխարհային Բանկ**
 - Տեխնոլոգիաների եւ մրցունակության բարձրացման ծրագիր
- **Հայաստանի ազգային մրցունակության խորհուրդ**
 - Զբոսաշրջության ոլորտ
 - Տաթևի վանք
 - Սպիտակ
 - Առողջապահության ոլորտ
 - Ատոմային բժշկության կենտրոնի հիմնադրում Երևանում՝ Առողջապահության և Էկոնոմիկայի նախարարությունների համագործակցությամբ
 - Կրթության ոլորտ
- **Կառավարություն**
 - Համահայկական Բանկ
 - Ադմինիստրատիվ ենթակառուցվածքի կատարելագործում (հարկային և մաքսային վարչարարության բարելավվում, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացում)
- **Էկոնոմիկայի նախարարություն**
 - Տեխնոպարկերի զարգացում

Ռազմավարական ճեղքումը հնարավոր է ջանքերի կենտրոնացմամբ մի քանի լծակների գործարկման ուղղությամբ:

Լծակների համակարգ

Լծակների հենք

Ինովացիոն քաղ-ն

**Քլաստերային (համալիրային)
քաղաքականություն**

Տարածաշրջանային
քաղ-ն

Առանցքային լծակներ


Օտարերկրյա
ուղղակի ներդրումներ

Սփյուռքի ներուժ

Կրթություն

Քլաստերային, ինովացիոն եւ տարածաշրջանների զարգացման քաղաքականությունները կարող են ապահովել համապատասխան համատեքստը, որտեղ լծակները գործում են արդյունավետ:

Լծակների կամ քաղաքականության հենք



- Կենտրոնական դերը պատկանում է քլաստերային քաղ-նը, որը պետք է դառնա տնտ. համակարգը կազմակերպելու ձեւ, այլ ոչ թե մի քանի ընտրված ոլորտներում նախաձեռնությունների բազմություն:
- Տնտեսությունը դիտարկվում է, որպես քլաստերների համախումբ:
- Քլաստերները արդիականացվում են ըստ հիմնական արժեքային առաջարկի:
- Քլաստերային քաղ-ն դառնում է ինովացիոն և տարածաշրջանների զարգացման քաղ-ն միակցող օղակ: Վերջիններս դառնում են ոչ վերացական, այլ ուղղված կոնկրետ արտադրական համալիրների զարգացմանը:
- Երեք բաղկացուցիչները իրականացվում են կոորդինացված եւ օժանդակում են միմյանց:

Մրցակցային լծակներն այն ընտրված գործոններն են, որոնց կենտրոնացված գործադրումն ապահովելու է ռազմավարական ճեղքումը:

- Լծակները թույլ են տալիս հատկորոշել գործիքների և համատեքստի օգտագործման շեշտադրումները, բայց պետք է զուգակցվեն գործարար միջավայրի բարելավման այլ ընդհանուր, ստանդարտ միջոցառումներով:
- ՕՈԻՆ-ը պետք է դառնա Հայաստան մասշտաբային ներդրումների և տեխնոլոգիաների փոխանցման աղբյուր: Բացի այդ, այն նպաստելու է մրցակցային դաշտի բարելավմանը՝ ընդլայնելով այն ի հաշիվ աճող միջազգային հատվածի:
- Համապատասխան քաղաքականության հենքի պարագայում Սփյուռքի ներուժի օգտագործումը դառնում է նպատակային՝ ուղղորդված կոնկրետ քլաստերների զարգացմանը, նորարարություններ և տարածաշրջանային անհավասարաչափությունների հարթեցմանը:
- Կրթությունը Հայաստանում կարող է դառնալ ոչ միայն մրցունակությունը բարձրացնող ընդհանուր գործոն, այլ տարածաշրջային դիրքավորման հիմք:

Առանցքային լծակներ

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

Սփյուռքի ներուժ

Կրթություն

Լծակային համակարգի գործադրումը կլինի արդյունավետ միայն նրա խոշորածավալ մակարդակի ապահովման պարագայում

- Հայաստանը այսօր կանգնած է տնտեսության ռեսուրսային փուլից ներդրումային փուլին անցնելու մարտահրավերի առջև:
- Այս փուլում կարևորագույն խնդիրներից է դառնում մասշտաբային ներդրումների իրականացումը եւ տեխնոլոգիաների ներկրումը:
- Բացի քլաստերային (համալիրային) տրամաբանությանն համապատասխան ներդրումների ներգրավվման քաղաքականությունից, Հայաստանին անհրաժեշտ է մեկ կամ երկու ենթակառուցվածքային “մեգա-նախագիծ”: Այն կապահովի անհրաժեշտ մասշտաբայնության ազդակը ամբողջ տնտեսության համար, պահպանելով տնտեսական աճը, որն էլ հնարավորություն կտա ժամանակ շահելու ինովացիոն ոլորտները աճեցնելու համար:
- Նմանատիպ մեգա-նախագիծ կարող է լինել նոր ատոմակայանի կառուցումը կամ մասնագիտացված (արդյունաբերական գոտի, տեխնոպարկ) նոր քաղաքային թաղամասի կառուցումը: